3124

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«02» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0034-23

Ձեռնարկողը՝ ***«Ապրիում պրո Սթուդիո» ՍՊԸ***
ք. Երևան, Բաղրամյան 1 փկղ., 14շ.

Գործունեությունը՝ ***«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ 0034-23

<<02>> 03 2023թ.

«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Ատրիում պրո Ստուդիո» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Հիմնադրույթային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) հայեցակարգային և սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիր կառավարմամբ:

Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզ) «Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/7), տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Նկարագրական մաս. Մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելքում, մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Սահմանակից է հյուսիսում՝ Տավուշի, արևմուտքում՝ Կոտայքի և Արարատի, հարավում՝ Վայոց ձորի մարզերին, արևելքում՝ Ադրբեջանի հանրապետությանը, հարավ-արևելքում՝ Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանին: Հայաստանի Հանրապետության՝ իր տարածքով ամենամեծ մարզը Գեղարքունիքի մարզն է, որի տարածքի 1/4-ը ծածկված է ջրով: Գտնվում է ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 5349 կմ^2 տարածք: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ:

Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր:

Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գեղարքունիքը տարանցիկ գոտի է մերձավորարևելյան և եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների համար:

«Գեղարքունիք-5» գյուղական համայնքներում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են, գյուղերով անցնում է ավտոմայրուղի Մ-14 և Մ-11:

Տարածաշրջանի ջրային ռեսուրսներ են հանդիսանում Սևանա լիճը 33.2 կմ² և նրա մեջ թափվող 28 գետերը՝ 26.8 մ³/վրկ միջին տարեկան հոսքով: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: «Գեղարքունիք-5» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում ընդգրկված համայնքները ներառում են Սևանի ջրավազանային կառավարման (Մասրիկ և Սոթք գետերի) տարածքում:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

Մարզում հանդիպում են նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հնավայրերի հետքեր, սեպագիր արձանագրություններ: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգհազարամյա հնության դամբարաններ:

Կլիման բարեխառն լեռնային է. ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Տեղումները՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գրեթե մշտական և ուժեղ քամիների ազդեցության տակ են Սոթքի, Սեմյոնովկայի, Վարդենյաց լեռնանցքները, մարզի լեռնային և հարթավայրային գոտիները:Հունվարյան միջին ջերմաստիճանը -5°-10° է: Ամառները տաք են, արևոտ, գերիշխում են քիչ ամպամած եղանակները: Մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր: Տարեկան արևափայլի միջին տևողությունը հասնում է ավելի քան 2700-2800 ժամ/տարի:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան Ազգային պարկը»: Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակի ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազար հա, որից 24.9 հազ. հա առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Դիտարկվող տարածաշրջանի ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ: Ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով:

Հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 48-ն են): Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնց կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, այդ թվում, կաթնասուններից՝ ջրասամույրը, գորշ արջը, անտառային կատուն, բեզոարյան այծը, սողուններից՝ խայտաբղետ մողեսիկը և փոքրասիական մողեսը, իսկ թռչուններից՝ ձկնկուլը, սովորական ֆլամինգոն, Հայկական որորը, որը համարվում է էնդեմիկ տեսակ: Սևանա լճի երկու էնդեմիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղուն նույնպես ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դիտարկվող տարածքին բնորոշ են և ամենուրեք հանդիպում են՝ խայտակզաքիսը, ջրասամույրը (գետերի և գետակների հիների երկայնքով):

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթի մշակման հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվում են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար:

«Գեղարքունիք-5» տարածքը ներառում է Վարդենիս քաղաքը, Այրք, Ներքին Շորժա, Վերին Շորժա գյուղական բնակավայրերը: Բնակչության թիվը կազմում է 12748 մարդ:

«Գեղարքունիք-5» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 12965.1հա տարածք, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր – 11354.56հա,
- բնակավայրերի հողեր – 1178.75հա
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր – 104.96հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմուն. հողեր – 30.58հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր – 28.41հա,
- հատուկ նշանակության հողեր – 3.4հա,
- անտառային հողեր – 177.29հա,
- ջրային հողեր – 43.84հա:

Քանի որ հողային ֆոնդում պահուստային հողեր չկան, ապա հողերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո ընդհանուր տարածքի մակերեսը փոփոխության չեն ենթարկվելու:

Հեռանկարային զարգացման շրջանակներում համայնքների հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

Վարդենիս քաղաք՝

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 3761.19հա,
- բնակավայրի հողեր՝ 923.74հա, հեռանկարում՝ 927.76հա, որից բնակելի կառուցապատման՝ 532հա, հեռանկարում՝ 561.93հա, հասարակական կառուցապատման՝ 36.83հա, հեռանկարում՝ 47.39հա, խառը կառուցապատման՝ 1հա, հեռանկարում՝ 16.86հա, ընդհանուր օգտագործման՝ 128.73հա, հեռանկարում՝ 130.75հա, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ՝ հեռանկարում 9.97հա, այլ հողեր՝ 225.18հա, հեռանկարում՝ 160.86հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 78.47հա, հեռանկարում՝ 76.85հա, որից արդյունաբերական՝ 10.73հա, գյուղատնտեսական արտադրական հողեր՝ 31.87հա, հեռանկարում՝ 30.25հա, պահեստարաններ՝ 20.22հա, ընդերքօգտագործման՝ 15.65հա, հեռանկարում՝ չեն փոխվելու,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 61.74հա, հեռանկարում՝ 69.61հա, այդ թվում էներգետիակայի՝ 2.18հա, կապի՝ 0.14հա, տրանսպորտի՝ 45.49հա, հեռանկարում չեն փոփոխվելու, կոմունալ ենթակառուցվածքների՝ 13.9հա, հեռանկարում՝ 21.8հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 14.52հա, որից պատմության և մշակույթի 11.35հա, հատուկ նշանակության հողեր ՝ 3.4հա, հանգստի համար նախատեսված՝ 3.17հա հեռանկարում չեն փոխվելու,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2481.82հա, որից արոտավայրերը՝ 502.33հա, վարելահող՝ 1716.86հա, հեռանկարում՝ 1714.54հա, խոտհարքեր՝ 37.97հա, այլ հողատեսքերը՝ 224.66հա, հեռանկարում չեն փոփոխվելու,
- անտառային հողեր՝ 177.29հա,
- ջրային հողեր՝ 20.21հա,
- գետեր՝ 6.35հա,
- լճեր՝ 56.73հա,
- ջրանցքներ՝ 11.31հա,
- հիդրոտեխնիկական և ջրտնտ. այլ հողեր՝ 2.55հա:

Այրք բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 3363.06հա,
- բնակավայրի հողեր՝ 162.72հա, որից բնակելի կառուցապատման՝ 64.37հա, հեռանկարում՝ 114.63հա, հասարակական կառուցապատման՝ 3.09հա, հեռանկարում՝ 4.40հա, ընդհանուր օգտագործման՝ 11.82հա, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ հեռանկարում ՝ 3.30հա, այլ հողեր՝ 83.44հա, հեռանկարում՝ 28.57հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 6.36հա, որից գյուղարտադրական՝ 6.36հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 4.87հա, հեռանկարում՝ 8.06հա, այդ թվում էներգետիակայի՝ 0.15հա, կապի՝ 0.01հա, տրանսպորտի՝ 4.57հա, հեռանկարում՝ չեն փոխվելու, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.14հա, հեռանկարում՝ 3.33հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5.54հա, հեռանկարում՝ 2.35հա,
- պատմական մշակութային՝ 5.54հա, հեռանկարում՝ 2.35հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3177.6հա, որից խոտհարքեր՝ 134.16հա, արոտավայրերը՝ 1446.09հա, այլ հողատեսքերը՝ 28398հա, հեռանկարում չեն փոխվելու,
- ջրային հողեր՝ 5.97հա,
- ջրանցքներ՝ 5.97հա, հեռանկարում չեն փոխվում:

Ներքին Շորժա բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 3663.95հա,
- բնակավայրի հողեր՝ 46.23հա, հեռանկարում՝ 45.802հա, որից բնակելի կառուցապատման՝ 20.96հա, հեռանկարում՝ 29.874հա, հասարակական կառուցապատման՝ 0.2հա, հեռանկարում՝ 0.56հա, ընդհանուր օգտագործման՝ 3.85հա, հեռանկարում՝ 4.861հա, ընդհանուր օգտագործմանկանաչ տարածքներ հեռանկարում՝ 0.384հա, այլ հողեր՝ 21.22հա, հեռանկարում՝ 10.123հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 8հա, որից՝ գյուղարտադրական՝ 8հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 5.8հա, հեռանկարում՝ 7.09հա, այդ թվում էներգետիակայի՝ 0.86հա, տրանսպորտի՝ 4.94հա, կոմունալ ենթակառուցվածքների հեռանկարում՝ 1.29հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր /պատմական և մշակութային/՝ 4հա, հեռանկարում՝ 3.188հա, հանգստի համար նախատեսված, հեռանկարում՝ 0.158հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3391.67հա, հեռանկարում՝ 3391.62հա, որից վարելահող՝ 714.24հա, խոտհարքեր՝ 531.7հա, արոտավայրեր՝ 1922.3հա, այլ հողատեսքերը՝ 423.43հա, հեռանկարում չեն փոփոխվելու,

- ջրային հողեր՝ 8.25հա,

Վերին Շորժա բնակավայր՝

- բնակավայրի հողերի ընդհանուր մակերեսը՝ 2176.9հա,
- բնակավայրի հողեր՝ 46.06հա, հեռանկարում՝ 47.82հա, որից բնակելի կառուցապատման՝ 19.34հա, հեռանկարում՝ 31.91հա, հասարակական կառուցապատման՝ 3.49հա, հեռանկարում՝ 4.84հա, ընդհանուր օգտագործման՝ 3.8հա, հեռանկարում 4.41հա, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները հեռանկարում՝ 1.81հա, այլ հողեր՝ 19.43հա, հեռանկարում 4.85հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 12.13հա, որից գյուղարտադրական՝ 12.13հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 1.48հա, հեռանկարում՝ 3.2հա, այդ թվում՝ էներգետիկա՝ 0.1հա, տրանսպորտի՝ 1.47հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 1.72հա, հեռանկարում՝ չեն փոխվում,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4.35հա, հեռանկարում՝ 4.31հա, այդ թվում՝ հանգստի համար նախատեսված հեռանկարում՝ 1.68հա, պատմության և մշակութային ՝ 4.35հա, հեռանկարում՝ 2.63հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2103.47հա, հեռանկարում՝ 2100.03հա, որից վարելահող 504.43հա, խոտհարքեր՝ 111.23հա, արոտավայրերը՝ 1261.86հա, հեռանկարում՝ 1258.42հա, այլ հողատեսքերը՝ 225.95հա, հեռանկարում՝ չիմ փոխվում,
- ջրային հողեր՝ 9.41հա:

Մարզի տարածաշրջանի ՄՄՏՀ նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Միկրոռեգիոնի գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված համայնքների զարգացման ծրագրերում:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ ձկնաբուծությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

Մարզն ունի մեծ զբոսաշրջային ներուժ՝ այն հանդիսանում է մարզի բնակչության զբաղվածության հիմնական աղբյուրներից մեկը: Զբոսաշրջությունը հիմնականում կենտրոնացած է Սևանա լճի շրջակայքում և, որպես կանոն, կրում է խիստ արտահայտված սեզոնային բնույթ:

«Գեղարքունիք-5» տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,

- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Համաձայն հաշվետվության համայնքների հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար: Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում նախատեսված չէ:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը կարգավորված չէ, այն իրականացվում է տարածքի աղբյուրների ջրով:

Անբավարար վիճակում է գտնվում մարզի ջրահեռացման համակարգը, Ինժեներական ենթակառուցվածքներով (հիմնականում կոյուղացման) ցածր մակարդակները ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ:

Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, ինչի շնորհիվ մասամբ /իրականացվում է միայն մեխանիկական մաքրում/ լուծվել է կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում ևս նախատեսվում է կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան:

«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնում ներառված բնակավայրերից միայն Վարդենիս քաղաքի ջրամատակարարումն է իրականացվում "Վեոլիա ջուր" ընկերության կողմից:

Ըստ ջրային կոմիտեի ներկայացված տեղեկատվության՝ քաղաքի խմելու ջրամատակարարումն իրականացվում է 3 աղբյուրներից՝ 2x400 և 1x350 մմ տրամագծով ինքնահոս ջրատարների միջոցով, որոնց տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Միջին տարեկան ջրաքանակը կազմում է 350 լ/վրկ, բաժանորդների քանակը՝ 4438:

Ըստ «Վեոլիա ջուր» ընկերության կողմից տրամադրած տեղեկատվության՝ Վարդենիս քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցը գտնվում է ոչ բարվոք, քայքայված վիճակում և ամբողջովին կարիք ունի փոխարինման:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը մեծ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար:

Ըստ «Վեոլիա ջուր» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության՝ դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերից կոյուղացված է միայն Վարդենիս քաղաքը /մոտ 75 %-ով /: Գյուղական բնակավայրերը չունեն կոյուղու հոսքաջրերի հեռացման համակարգ: Կրթական, վարչական, առողջապահական հիմնարկների կոյուղու հոսքաջրերի հեռացման համար հիմնականում նախատեսած են լոկալ սեպտիկ հորեր: Բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը՝ նախատեսելով կենսաբանական մաքրման կայաններ կամ սարքավորումներ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

«Գեղարքունիք-5» տարածաշրջանի համայնքներում հեղեղատարը կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու

նպատակով բոլոր համայնքների համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում:

Ոռոգման նպատակով մարզում կառուցված է 7 ջրամբար՝ գումարային 4.28 մլն.խմ ծավալով: Ոռոգման և ջրամատակարարման նպատակով մարզում գործում է ոչ մեծ հզորության 23 պոմպակայան, խորքային հորերից ջուրը արտամղելու նպատակով:

Մարզի վարելահողերը կազմում են շուրջ 85.7 հազ.հա, այդ թվում ոռոգելի հողատարածքները կազմում է շուրջ 12 հազ.հա: Բացի վարելահողերից առկա են նաև խոտհարքներ շուրջ 35 հազ.հա և արոտավայրեր շուրջ 181 հազ.հա:

Մարզի առավել խոշոր ջրանցքներն են Մասրիկի, Ծովակի և Վարդենիսի ՀԷԿ-ի ջրանցքները:

Տարածքի ջրային ռեսուրսները կարգավորելու և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու նպատակով մարզում ուսումնասիրվել է ևս 16 ջրամբարների շինարարության հնարավորությունները գումարային 39.41 մլն.մ^3 ծավալով:

Համաձայն նախագծի հատուկ պահպանվող տարածքները, հանգստի համար նախատեսված տարածքը 30.4 հա է, պատմության ու մշակույթի և բնական լանդշաֆտի պահպանման տարածքները՝ 39.2հա է:

Կենտրոնական էկոլոգիական գոտին ընդգրկում է Շորժա-Սևան թերակղզի-Հայրիվանք տիրույթի տարածքները և հանդիսանալով որպես հատուկ պահպանվող տարածք նախատեսված է օգտագործել միայն բնապահպանական, առողջարարական, պատմամշակույթային, բնակչության հանգստի համար:

Հաշվի առնելով, որ լճի մակարդակի բարձրացումը մինչև հաշվային 1903.5 մ նիշը՝ կնպաստի նրա էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը, նախատեսված է՝

- ապամոնտաժել 1908մ նիշից ցածր գտնվող կառույցները և տարածքը մաքրել շինարարական և այլ աղբից;
- հանգստի համար ակտիվ օգտագործման նպատակով նախատեսված է կառուցապատման ենթակա տարածքների միջև ստեղծել "բուֆերային" շերտեր, բնական լանդշաֆտը պահպանելու համար;
- կենտրոնական գոտու ամբողջ երկարությամբ 1903.5մ նիշից բարձր 100մ լայնությամբ տարածքն ամրագրված է որպես լանդշաֆտի պահպանման շերտ և ենթակա չէ կառուցապատման;
- առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքներում գոտիների միջև նախատեսվում է.
- 5-10մ լայնությամբ կանաչապատման շերտեր;
- ինժեներական և կոմունալ կահավորման հարթակներ, մեկ հանգստացողին 6մ^2 հաշվարկով;
- աղբակուտակման տարողություններ կոշտ թափոնների և կեղտաջրերի կուտակիչ ջրաթափանց հորեր, կենտրոնական գոտու սահմաններից դուրս;
- ավտոկայանները տեղադրել ավտոմայրուղու ճանապարհամերձ գոտիներում և կահավորել պարբերաբար դատարկվող յուղակուտակիչ սարքերով:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Դիտարկվող միկրոռեգիոնի էլեկտրամատակարարումն իրականացվում է «Լարեր» տեղամասի կողմից: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТНАЯ КОМИССИЯ
COMMISSION OF EXPERTS

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Ըստ «Գազպրոմարմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ մարզի տարածքով անցնում են Ղազախ-Երևան Dպ=700 մմ, Մարտունի-Վարդենիս Dպ=500 մմ, Սևան-Գավառ Dպ=500 մմ,Ղազախ-Երևան Dպ=500 մմ, Վարդենիս-Ջերմուկ Dպ=300 մմ և Գավառ-Մարտունի Dպ=500 մմ մայրուղային գազատարներն իրենց միջակապերով, կողմնատար-գազատարներով և նրանց վրա տեղադրված կառույցներով:

Ըստ տեղեկատվության դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերից գազաֆիկացված է միայն Վարդենիս քաղաքը:

Դիտարկվող տարածաշրջանի գյուղական բնակավայրերի բնակչության զգալի մասը ներկայումս ջեռուցման նպատակով օգտագործում է փայտի կամ աթարի վառարաններ:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է:

Համաձայն նախագծի միկրոռեգիոնի բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1178.75 հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը 4 է:

Հաճախակի է աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1814.5 տ/տարի:

Նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, այրել և հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար «Կոտայքի և Գեղարքունիկի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում թափոնների փոխաբեռնման կայանի կառուցման աշխատանքները, որի շրջանակներում նախատեսվում է մարզում առկա բոլոր աղբավայրերի փակում, աղբահանության արդյունավետ համակարգի ներդնում և առաջացող աղբի տեղափոխում դեպի Հրազդան համայնքում կառուցվող սանիտարական աղբավայր:

Վարդենիս քաղաքում տեղակայված է 3, իսկ յուրաքանչյուր գյուղական բնակավայրում՝ 1 գերեզմանոց: Ընդհանուր թիվը կազմում է 6 հատ, իսկ ընդհանուր տարածքը կազմում 6 հա: Գերեզմանոցները գործող են:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Համաձայն նախագծի ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներևայլն) ընդհամենը կազմում են 0.1հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ:

Համայնքներում ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը կկազմի 16.8 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչը շուրջ 1178.75 հա:

«Գեղարքունիք-5» կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կկատարեն

շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում;
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում;
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում;
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում;
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում;
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում;
- համայնքների տարածքում աղբահանման և տեսակավորման կազմակերպում;
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում(սպանդանոցի կառուցում);
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում;
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում;
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ;
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;
- անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 40,8 տ/տարի;
- անցնել աղբի տեսակավորման;
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմանբ, անասնապահության, հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման կայանների շահագործում, թափոնների կառավարում), տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմերի սահմաններում:

«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն:

Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Ընդհանուր առմամբ «Գեղարքունիք-5» համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

«Գեղարքունիք-5» միկրոռեգիոնում ընդգրկված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ատրիում պրո Ստուդիո» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-5» միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ.մասնագետ՝ Արմինե Վարդանյան